

Աշոտ Ս. Աբրահամյան  
Բանաս. գիյր. թեկնածու

Լեզուն տարածություն է դառնում, որպեսզի  
տարածությունը նրա մեջ, լեզու դառնալով, խոսի  
և գրի իր մասին:

Ժերար Ժենեպ

### ՏԵՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ՀՈՐԻԶՈՆՆԵՐԸ\*

**Բանալի բառեր** – տեքստ, տարածություն, կառուցվածք, հաջորդականություն, շարժունություն, հաղորդող (հեղինակ), ընկալող (ընթերցող), հերմենևտիկա, հետկառուցվածքաբանություն:

Ոչ միայն փիլիսոփաներին ու ֆիզիկոսներին, այլև ուրիշ գիտությունների ներկայացուցիչներին երբևէ չի հաջողվել անտարբեր մնալ տարածության և ժամանակի նկատմամբ:

Իրենք այդպես էլ անբացատրելի մնալով՝ տարածությունն ու ժամանակը հաճախ օգտագործվում են որպես այլ իրողություններ բացատրելու միջոցներ: Այդ առեղծվածային էություններին դիմելու գայթակղությունից չի կարողանում խուսափել նաև լեզվաբանությունը: Շարունակ փորձեր են արվում այս կամ այն լեզվական իրողությունը կապելու կամ տարածության, կամ ժամանակի հետ: Առաջին այդպիսի փորձերը կապված էին հնչյունի և գրի փոխհարաբերության վերլուծության հետ. լեզվական երկու արտահայտամիջոցները քննողները հաճախ հնչյուններն ու գրերը բաշխում էին ժամանակի և տարածության միջև՝ լեզվի հնչյունային արտահայտությունը բնութագրելով որպես ժամանակային, իսկ գրայինը՝ որպես տարածական<sup>1</sup>:

Ապա այս հատկացումները տեղափոխվում են նաև լեզվի և խոսքի գնահատումների մեջ: Այդպիսի ըմբռնումն առաջին հերթին բխեցվում է խոսքի նշանակիչի գծայնության համոզմունքից. ժամանակային հաջորդականությամբ արտաբերվող հնչյուններով արտահայտվող խոսքը չի կարող չտողորվել հնչյունի ժամանակայնությամբ: Բացի դրանից՝ գրի մասին ընդհանուր դատողությունները մեծ մասամբ սահմանափակվում են հնչյու-

\*Հոդվածն ընդունվել է տպագրության 17.08.2016:

1 Տե՛ս Սոսյուր Ֆ. դը, Ընդհանուր լեզվաբանության դասընթաց, Եր., «Սարգիս Խաչենց, Փրինսիփոն», 2008, էջ 110-111, Թոկարև Ս. Андре Леруа-Гуран и его труды по этнографии и археологии // Этно-логические исследования за рубежом: Критические очерки. М.: Наука, 1973, էջ 203, Якобсон Р. К вопросу о зрительных и слуховых знаках // Семиотика и искусствоведение. М.: Мир, 1972, էջ 84:

Ը (ԺԳ) Գարի. թիվ 3 (55), հայիս-սեպտեմբեր, 2016  
ՎԿՄ համահայկական հանդես

նային գծաշարն ընդօրինակող այբբենական գրով, և որպես խոսքի երկու (հնչյունային և գրային) դրսևորումների ընդհանուր հատկանիշ դիտվում է գծայնությունը, որի ըմբռնումը ժամանակային հաջորդման հետ է կապվում: Թեև «խոսք» անվանումը երկիմաստ է, նշանակում է և խոսելու ընթացքը, և նրա արդյունքը, նրա ժամանակային բնութագրման համար հիմք է դառնում այդ իմաստներից առաջինը, իսկ երկրորդը լռելյայն անտեսվում է, քանի որ հնչյունները զգայելի հետք չեն թողնում:

Պակաս ակնհայտ է լեզուն որպես տարածություն բնութագրելու հիմունքը: Իրականում կատարվում է **ժամանակային – ոչ ժամանակային** հակադրումը, իսկ ժամանակայինից տարբերվողը զուգորդվում է տարածականի հետ, ուստի լեզվի հատկանիշ է համարվում տարածականությունը, առավել ևս կառուցվածքի գաղափարի շոնդալից տարածման պայմաններում. չէ՞ որ կառուցվածքը հենց տարածության մեջ կարելի է պատկերացնել: Հրաշալի իմանալով հանդերձ, որ լեզվական մակարդակներով ներկայացվող կառույցը իրականում տարածության մեջ գտնվող և նրա որոշակի մասը զբաղեցնող դարակներից կազմված պահարան չէ՝ լեզվաբանները, այնուամենայնիվ, սկսում են երկյուղածորեն հավատալ իրենց իսկ ստեղծած նոր փոխաբերությանը, ինչպես որ դրանից առաջ էլ, ասենք, անխախտ հավատով պնդում էին, որ տասնյակ լեզուներ մի բազմազավակ նախամոր դուստրերը, թոռնուհիներն ու ծոռնուհիներն են, ընդ որում բոլորը՝ միածին: (Իհարկե, գիտության օրինականացրած վերացարկումների իրականությունն ընդունելը միայն լեզվաբաններին չէ հատուկ. այսպես՝ թվերով հաշվող մաթեմատիկոսի համար այդ թվերը պակաս իրական չեն, քան մատներով հաշվող երեխայի համար՝ իր մատները):

Տարածական պատկերացումներով առաջնորդվելը հոգեբանական, որոշ առումով նաև բնախոսական արմատներ ունի: Մարդը ապրում է իրեն տարածականորեն կանխատրված նյութական աշխարհում: Տարածականությանը օժտված առարկաների ընկալումներին են ծառայում մարդու բոլոր զգայարանները (երկուսը՝ անմիջաբար, մյուս երեքը՝ այդ առարկաների տարբեր հատկությունների միջնորդավորմամբ): Մարդը տեսնում-շոշափում-լսում-համտեսում-հոտոտում է այն ամենը, ինչ իրեն տրված է տարածության մեջ, տարածությունը նրան փորձնայնորեն ծանոթ է և ենթադրաբար հասկանալի: Տարածության մեջ իր կամքով տեղաշարժվելու և տարածության մեջ գտնվող իրերը տեղաշարժելու ունակության շնորհիվ մարդը փաստորեն կարողանում է փոխել տարածության կառուցվածքը, ուստի իրեն գոնե ինչ-որ սահմաններում ազատ է զգում տարածության մեջ և տարածականությանը դեմ հանդիման: Այստեղ նրան ոչինչ սկզբունքորեն չի սահմանափակում՝ բացի ձգողության ուժից, որի պատճառը նա այնքան էլ չի կապում տարածության հետ: Այդ պատճառով մարդը ենթադրում է, որ կարող է իրեն ենթարկել տարածությունը: Այլ է ժամանակի խնդիրը: Այդ խորհրդավոր էությունը կամ նրա ազդեցությունը մարդը զգում է, բայց չի կարող զգայականորեն ընկալել այն: Ժամանակի մեջ որևէ ինքնուրույն տեղաշարժ նա չի կարող կատարել, այդ պատճառով ժամանակը պատկերացվում է որպես մի անկասելի հորձանք, որին մարդն ինքն է ենթարկված, և որը գնում է իր հունով՝ մարդուն էլ հետը

տանելով: Այս հսկայական տարբերության հետևանքով մարդն իրեն ավելի հարմարավետ և ապահով է զգում տարածությանը հարաբերվելիս:

Մարդու աշխարհընկալման մեջ տարածության բացառիկ դերը հիմք է դառնում, որ մտածողական կաղապարները ևս տարածական նմուշներն ընդօրինակեն: Տարածությունը դառնում է ամեն տեսակի, նաև ոչ տարածական գաղափարների լեզվական արտահայտման ելակետ: Կասիրերը խոսում է ժամանակի հատվածների լեզվական արտահայտումների տարածական հիմքի մասին<sup>2</sup>: Բերգսոնը պնդում է, որ հենց լեզուն է էական դեր կատարել ժամանակի փիլիսոփայական տարածակերպ ըմբռնումների ստեղծման մեջ. «Տեսականությունը միշտ արտահայտվում է ձգվածության միջոցով: Ժամանակ նշանակող հասկացությունները փոխառված են տարածության լեզվից: Մենք կոչ ենք հղում ժամանակին, իսկ մեր կոչին պատասխանում է տարածությունը»<sup>3</sup>:

Ավելին, նաև ոչ նյութական գաղափարներն են արտահայտվում տարածական պատկերներով: Եթե նախ Ավգուստինոսը, ապա, ամենայն հավանականությամբ նրան հետևելով, Թովմա Ավվինացին բավարարվում են ընդամենը «տեսնել» բառի իմաստափոխությունների շղթան ներկայացնելով, որը, ըստ մեկի, ձգվում է առարկան աչքով ընկալելուց մինչև առարկաների ցանկացած ճանաչում, ըստ մյուսի՝ անգամ մինչև Աստծու ներըմբռնողական հայեցումը<sup>4</sup>, ապա Լակոֆը և Ջոնսոնը «կողմնորոշումային փոխաբերությունների» վերլուծությունից եզրակացնում են, որ ընդհանրապես «մեր հիմնարար հասկացությունների մեծ մասը կազմակերպված է մեկ կամ ավելի տարածական փոխաբերությունների միջոցով»<sup>5</sup>: Հարթմանը աշխարհի ճանաչման մեջ հատկանշական է համարում այն, որ թեև պատկերացումներն իրենք տարածականություն չունեն, բայց դրանց մեջ եղածը պատկերացվում է տարածական ձգվածության ձևով. Հարթմանը դա համարում է արտաքին աշխարհին գիտակցության հարմարվելու ապշեցուցիչ միջոց<sup>6</sup>: Ինչ վերաբերում է լեզվաբանությանը, ապա, ինչպես Նյոթն է ասում, լեզվաբանության մակալեզվում տարածական փոխաբերություններն այնքան մեծաթիվ են, որ լեզվի և տարածական պատկերացումների կապի մասին խոսելիս արդեն իսկ տարածական փոխաբերություններով արտահայտված վերացական հասկացությունների իմաստը որոշարկելու համար պետք է լինում նոր, արդեն մակալեզվաբանական տարածական փոխաբերություններ կազմել<sup>7</sup>:

2 Տե՛ս **Кассирер Э.** Философия символических форм. Т. 2. М.; СПб.: Университетская книга, 2002, էջ 120–121. այդպիսի օրինակներ տե՛ս նաև **Топоров В.** Пространство и текст // Текст: семантика и структура. М.: Наука, 1983, էջ 232–233, 235:

3 **Бергсон А.** Мысль и движущееся // **Бергсон А.** Избранное: Сознание и жизнь. М.: РОССПЭН, 2010, с. 86:

4 Տե՛ս **Блаженный Августин.** Исповедь // **Блаженный Августин.** Творения. В 4-х т. Т. 1. СПб.: Алетея; Киев: УЦИММ-Пресс, 2000, էջ 649–650, **Фома Аквинский.** Сумма теологии. Ч. I. Вопросы 44–74. Киев: Эльга; Ника-Центр, 2003, էջ 261:

5 **Лакофф Дж., Джонсон М.** Метафоры, которыми мы живем. М.: Едиториал УРСС, 2004, с. 41:

6 Տե՛ս **Горнштейн Т.** Философия Николая Гартмана (Критический анализ основных проблем онтологии). Л.: Наука, 1969, էջ 212:

7 Տե՛ս **Нёт В.** Текст как пространство // Критика и семиотика. Вып. 6. Новосибирск, 2003, էջ 48: Կուրբյակովան ևս նշում է լեզվի նկարագրության մակալեզվում տարածական պատկերացումների քննության հեռանկարը, բայց ինքը այդպիսի քննություն չի կատարում, այլ բավարարվում է ընդամենը դրա կարևորության մասին մի քանի անգամ հիշեցնելով. Տե՛ս **Курбьякова Е.** Язык пространства и пространство языка (к постановке проблемы) // Известия АН. Серия литературы и

Քանի որ տեքստի ուսումնասիրությունը սկսվում է որպես նրա կառուցվածքի ուսումնասիրություն, բնականաբար, տեքստը նույնպես բնութագրվում է տարածականությամբ: Սակայն տարածությանը նման եռաչափ կառուցվածք չի դիտարկվում, այլ միայն հռչակվում է: Տեքստը սկզբնապես սահմանվում է որպես կապակցված նախադասությունների հաջորդականություն, և ինչպես որ մյուս լեզվական միավորների, այնպես էլ տեքստի կառուցվածքային վերլուծությունը տարօրինակ տրամաբանությամբ իրականացվում է որպես գծային հաջորդականության հատույթավորում. նախադասության քերականության ընդլայնումով ստեղծվում է տեքստի քերականությունը, որի հիմնական առարկան են դառնում տեքստի բաղադրիչների կապակցման միջոցները: Ընդվզումը չի ուշանում: Անգամ կանոնական դասական տեքստերի համար այդպիսի վերլուծությամբ սահմանափակվելն անխուսափելիորեն պիտի անբավարարության զգացում առաջ բերեր: Դրան ավելանում է առնվազն գեղարվեստական և փիլիսոփայական տեքստերի կառուցվածքում կատարված հեղաշրջումները հաշվի առնելու անհրաժեշտությունը. առաջին հերթին դա վերաբերում է մոդեռնիզմի գրական տեքստերի միանգամայն նոր հյուսվածքին, ինչպես նաև փիլիսոփայական տեքստին Նիցշեի տված նոր կերպարանքին: Սակայն հաճախ տեքստի տեսաբանները ոչ թե պարզապես սկսում են հաշվի առնել այդպիսի տեքստերը, այլ հենց միայն դրանք են դնում տեսության հիմքում, թող թույլ տրվի ասել՝ օրենքը լրացնելու չեն գալիս, այլ փոխելու: Ֆրանսիական հետկառուցվածքաբանությունը հրաժարվում է տեքստը որպես ասույթների հաջորդականություն դիտարկելուց: Տեքստի գծային ըմբռումից հրաժարվելը, բնականաբար, պիտի զուգակցվեր նոր ըմբռման առաջընթացի հետ. իսկ գծի միաչափության լավագույն հակադրությունը տարածությունն է՝ իր եռաչափությամբ, մանավանդ որ հնարավոր է դառնում գծայնության հետ դեն նետել նաև նրա մարմնավորած ժամանակայնությունը:

Տեքստի տարածականության դրույթը աստիճանաբար ամրապնդում է իր դիրքերը տեքստի ամենատարբեր գնահատումների մեջ: Պատմությունը կրկնվում է: Տեղի է ունենում նույնը, ինչ որ լեզվի բնութագրման փորձերում. ժամանակային չէ, ուրեմն տարածական է. «... տեքստը... ընդամենը տարածություն է, որտեղ բնկվում են լեզվական կրակները»<sup>8</sup>: Իհարկե, տեքստի դեպքում այդօրինակ գնահատումն ավելի հիմնավորված է: Դրան նպաստում է այն հանգամանքը, որ նկատի է առնվում առաջին հերթին գրավոր տեքստը, որը տարածության մեջ որոշակի տեղ է զբաղեցնում (էջ, գիրք): Ի վերջո հետկառուցվածքաբանները, կրկնելով տիեզերագիտության մեջ դարեր առաջ արված քայլերը, հրաժարվում են ոչ թե կառուցվածքի գաղափարից, այլ կառուցվածքի կենտրոնի գաղափարից<sup>9</sup>: Իմաստային-գաղափարական կենտրոնից թելադրվող կառուցվածքը զուգորդվում է

языка. 1997. Т. 56. N 3, էջ 22, 23, 30:

<sup>8</sup> **Барт Р.** Удовольствие от текста // **Барт Р.** Избранные работы: Семиотика. Поэтика. М.: Прогресс, 1989, էջ 474:

<sup>9</sup> Տե՛ս **Кристева Ю.** Порождение формулы // **Кристева Ю.** Избранные труды: Разрушение поэтики. М.: РОССПЭН, 2004, էջ 378-379, **Деррида Ж.** Структура, знак и игра в дискурсе гуманитарных наук // **Деррида Ж.** Письмо и различие. СПб.: Академический проект, 2000, էջ 352-354, **Барт Р.** От произведения к тексту // **Барт Р.** Избранные работы: Семиотика. Поэтика, էջ 417:

իշխանության ու բռնության հետ, իսկ 1960-ականների Փարիզի խռովարարական տրամադրություններով արբեցած հետկառուցվածքաբանների համար իշխանության նշույն անգամ անհանդուրժելի է: Տեքստային տարածությունը չի ժխտվում, այլ վերաձևվում է. փոխվում է տարածության կազմակերպման սկզբունքը: Հստակ սահմանազատված առարկաների փոխարեն այդ տարածությունը գրադեցնում են գործընթացները. այս դրույթի տարբեր ձևակերպումները իրարից ընդամենը երանգներով են տարբերվում. «Տեքստը... գեղագիտական արտադրանք է, այլ նշանային գործունեություն, այն կառուցվածք է, այլ կառուցակազմիչ գործընթաց, պասիվ առարկա է, այլ գործ և խաղ, բացահայտման ենթակա իմաստներով հագեցած ինքնապարփակ նշանների համախումբ է, այլ տարածություն, որում տարված են իմաստային տեղաշարժերի գծերը»<sup>10</sup>, «... տեքստ գրելը կամ կարդալը... հենց տարածականության նոր ձևի բացահայտումն է տեքստում կամ ինքդ քեզ համար նոր տարածության ձեռքբերումը... դա քարտեզ է, որն ունի իր ճանապարհները և նրանց անտեսանելի ճյուղավորումները, ստորգետնյա ուղիները և այլն»<sup>11</sup>:

Ի հակադրություն լեզվի՝ ժխտվում է տեքստի կայական կառուցվածքը, կարծես թե լեզվի կառուցվածքը, իրոք, կայական է: Հետկառուցվածքաբանները, որոնցից շատերը նախկին կառուցվածքաբաններ են, անխնա կռիվ են հայտարարում այն հրեշի դեմ, որին ավելի վաղ հենց իրենք էին ծնունդ տվել («Ես եմ քեզ ծնել, ես էլ կսպանեմ» սկզբունքով, բայց, իհարկե, առանց այդպիսի խոստովանություն-կարգախոսի): Այսպես հետկառուցվածքաբանությունը ներքաշվում է «Սոսյուրն ընդդեմ Հումբոլդտի» գործով բանավեճի մեջ: «Լեզուն գործունեության արդյունք (Ergon) է, այլ գործունեություն (Energeia)»<sup>12</sup>, - ասում է Հումբոլդտը, որի համար հիմնարար նշանակություն ունի լեզվի կապը ոգու հետ: «Լեզուն խոսողի գործառություն է, այն պատրաստի արտադրանք է»<sup>13</sup>, - հակադարձում է Սոսյուրը, որի նպատակը համակարգն անշարժացնելով դիտարկելի դարձնելն է: Հակադրվելով կառուցվածքաբանությանը և նրա Ավետարանին՝ հետկառուցվածքաբանները ինքնաբերաբար հայտնվում են հումբոլդտականների ճամբարում, ավելի ձիշտ՝ ճամբարի եզրամասում, քանի որ ընդհանրությունը հենց միայն այս հարցով էլ սահմանափակվում է: Պետք է ենթադրել, որ նրանց ներշնչման աղբյուրը ոչ թե անմիջականորեն Հումբոլդտն է, այլ, ինչպես ուրիշ շատ հարցերում՝ Հայդեգերը<sup>14</sup>:

Իրեն որպես հենարան ծառայող կենտրոնից զրկվելով՝ տեքստը ներկայանում է որպես հեղհեղուկ, փոփոխական իրողություն: Եվ արդեն չի սպառնում շարժունության հետ միասին նաև ժամանակայնության կամ, այլ անունով, գծայնության վերադարձը, քանի որ այս անգամ արդեն խոսքը կազմակերպված, կանոնավոր և օրինաչափ, որոշակիորեն սահմանված ուղղություն ունեցող շարժման մասին է: Կարելի է նկատել, որ

10 **Барт Р.** Семиотика как приключение // Мировое древо, 1993, N 2, էջ 81-82. մեջբերված է ըստ **Багдасарьян Н.** и др. Культурология. М.: Высш. шк., 2001, էջ 105:

11 Жак Деррида в Москве: деконструкция путешествия. М.: РИК «Культура», 1993, էջ 182:

12 **Гумбольдт В.** фон. О различии строения человеческих языков и его влияния на духовное развитие человечества // **Гумбольдт В.** фон. Избранные труды по языкознанию. М.: Прогресс, 1984, էջ 70:

13 **Ушугир Ф.** դր. նշվ. աշխ., էջ 29:

14 Տե՛ս **Хайдеггер М.** Путь к языку // **Хайдеггер М.** Время и бытие. М.: Республика, 1993, էջ 262-270:

տեքստային տարածության այսպիսի ըմբռնումը հատկապես տեքստի կապակցությամբ ձևավորված ըմբռնում չէ: Ենթադրվում է, որ եթե տեքստը տարածական իրողություն է, նրա մեջ պիտի դրսևորվեն տարածության ընդհանրական հատկությունները: Ուստի ըստ էության միավորվում են տեքստի տարածականության դրույթը և ընդհանրապես տարածությանը հետկառուցվածքաբանական մոտեցումը, որի համաձայն՝ տարածությունը հաշվարկելի կետերի բազմություն չէ, այլ հարաձիգ և անկանխատեսելի շարժման հնարավորություն և հետևանք: Հետկառուցվածքաբանության ձևավորումից երկու-երեք տասնամյակ առաջ Բորխեսը Տյոն ֆանտաստիկ երկիրն է պատկերում. «Մծո-ի երկրաչափությունն ընդգրկում է երկու տարբեր գիտություններ՝ տեսողական ու շոշափողական: Վերջինս համապատասխանում է մերին և ենթարկված է առաջինին: Տեսողական երկրաչափության հիմքը ոչ թե կետն է, այլ մակերեսը: Այս երկրաչափությունը, որին անծանոթ են գուգահեռները, հայտարարում է, թե տեղափոխվող մարդը փոխում է իրեն շրջապատող ձևերը»<sup>15</sup>: Դեյոզը և Գվատարին դրան լիովին համահունչ տարածագիտություն են ներկայացնում<sup>16</sup>՝ տեղ-տեղ անգամ բառացի համընկնումներով: Շախմատի կաղապարը՝ որպես տարածության և տարածական տեղաշարժերի գերագույն կազմակերպվածության նմուշ, փոխարինվում է վաչկատունների գո խաղի կաղապարով, որը բացառում է կազմակերպվածությունը: Հաստատվում է Բորխեսի կանխագուշակումը. «Աշխարհը Մծո է դառնալու»<sup>17</sup>: Հին միստերիան նոր լուծում է ստանում, որն օրակարգից չի հանում «Որտե՞ղ է քո եղբայրը» հարցը, միայն թե այս անգամ այն ուղղված պիտի լինի Աբելին:

Թերևս ավելորդ չէ նշել, որ երբ տեքստի տարածականության ընդհանուր դրույթը ներառվում է մասնավոր մեկնաբանությունների մեջ, պարզվում է, որ գրեթե միշտ նկատի է առնվում մի ոչ լիակատար, թերի, պակասավոր տարածություն: Տեքստը հաճախ պատկերացվում է ոչ թե որպես եռաչափ տարածական պատկեր, այլ սոսկ որպես երկչափ հարթություն: Գուցե դրա պատճառն այն է, որ գրեթե բոլոր շարժումներն ամբողջությամբ կամ հատվածամասերի առանձնացումով կարող են նկարագրվել մեկ հարթության սահմաններում: Գուցե դրա պատճառն այն է, որ տեքստը էջում է պատկերացվում, իսկ էջը հարթություն է: Ինչևէ, տեքստի (և ոչ միայն տեքստի) վերլուծություններում մեծ հաճախականություն են ձեռք բերում «հարթություն» և «մակերևույթ» բառերը, որոնց հայտնվելը պատահական չէ. դրանք որոշակի մոտեցման մարմնավորումներ են. «Այն ամենը, ինչ տեղի է ունենում, և այն ամենը, ինչ ասվում է, տեղի է ունենում և ասվում է մակերևույթին»<sup>18</sup>: Իսկ այդ մակերևույթը տնօրինողները երկուսն են՝ հեղինակը և ընթերցողը (առավել չեզոք անվանումներով՝ տեքստը կազմողն ու տեքստն ընկալողը, հաղորդակցման տեսության տերմիններով՝ հասցեագրողն ու հասցեատերը): Նրանք են որոշում, թե որտեղով է անցնում տեքստային տարածությունը խաբուսի-

15 **Բորխես Խ.**, *Մծո*, Uctar, Orbis Tertius // **Բորխես Խ.**, Երկու արքաներն ու երկու լաբիրինթոսները, Եր., Ապոլոն, 1992, էջ 18:

16 Տե՛ս **Делез Ж., Гваттари Ф.** Тысяча плато: Капитализм и шизофрения. Екатеринбург: У-Фактория; М.: Астрель, 2010, էջ 604-625, 805-851:

17 **Բորխես Խ.**, նշվ. աշխ., էջ 24:

18 **Делез Ж.** Логика смысла. М.: ИЦ “Академия”, 1995, էջ 164:

կորեն սահմանագծող հորիզոնի գիծը, նրանք են սահմանում այդ տարածության կողողինատների հաշվարկման առանցքները:

Դասական հերմենևտիկան գերակա դիրք է վերապահում տեքստի հեղինակային իմաստավորմանը: Իսկ ընթերցողի նպատակն է համարվում հեղինակի մտահղացումն ըմբռնելը՝ հիմնվելով նրա դիտողությունների, գրքին կցված առաջաբանի, վերնագրի և այլ ցուցիչների ու ցուցումների վրա: Ընթերցողը պիտի հետևի հեղինակին՝ ոչ մի քայլ չշեղվելով նրա նախանշած ճանապարհից, ինչպես, առաջնորդողին հետևելով ու ոտքը միայն նրա դրած տեղում դնելով, անցնում են ճահճուտը կամ ականապատված դաշտը: Ի հակադրություն այս ենթակարգությանը՝ առաջ է քաշվում տեքստի տարբեր մեկնաբանությունների հնարավորության, անխուսափելիության և փաստացի առկայության վերաբերյալ պնդումը: Ամեն մի ընթերցող հեղինակային տեքստի հիման վրա իր տեքստն է կազմում՝ ինչ-որ չափով նրան նման, ինչ-որ չափով նրանից տարբեր. «Ամեն մի հասկանալ... միշտ դրա հետ մեկտեղ չհասկանալ է, մտքերի և զգացմունքների ամեն մի համաձայնություն դրա հետ մեկտեղ՝ տարաձայնություն»<sup>19</sup>: Բոլոր ընթերցողների համատեղ ջանքերով ստեղծվում են անթիվ-անհամար «ընթերցողական» տեքստեր, որոնցից յուրաքանչյուրը շատերից մեկն է միայն և չի կարող հավակնել միակության:

Հարց է ծագում՝ եթե տարբեր ընթերցողների դիրքորոշումները հավասարաթեք են, ապա ինչ հարաբերության մեջ են հեղինակային ռազմավարական ծրագիրը և ընթերցողների մարտավարական վճիռները, որքան կարող են ընթերցողական ընկալումները հեռանալ հեղինակային մտահղացումից: Այս հարցում գերագույն ժողովրդավարությամբ կամ, ավելի ճիշտ, «ընթերցողավարությամբ» աչքի է ընկնում Էկոն. «Ոչինչ այնպես չի ուրախացնում ստեղծագործողին, ինչպես նոր ընթերցումները, որոնց մասին նա չի մտածել, և որոնք ծագում են ընթերցողի մեջ»<sup>20</sup>:

Գործաբանությունը հաջողված է համարում այն հաղորդումը, որում պերլոկուտիվ ակտը (հաղորդման արդյունքը) համապատասխանում է իլոկուտիվ ակտին (հաղորդողի նպատակադրմանը)<sup>21</sup>: Նույն չափանիշով տեքստային հաղորդակցումը գնահատելը առնվազն տարակուսելի կլինի, ուստի պետք է ենթադրել, որ ամենևին էլ պատահական չէ, որ գործաբանությունն իր դատողությունները հիմնում է ասույթների վրա և չի անդրադառնում ծավալուն տեքստին<sup>22</sup>: Գյոթեի «Երիտասարդ Վերթերի տառապանքները» կամ Վայնինգերի «Սեռ և բնավորություն»-ը կարդալուց հետո որոշ ընթերցողներ ինքնասպանություն են գործել: Միանշանակորեն հնարավոր չէ որոշել, թե պերլոկուտիվ բազմակի, այդ թվում ողբերգական

19 Гумбольдт В. фон. ևշվ. աշխ., էջ 84:

20 Эко У. Заметки на полях “Имени розы” // Эко У. Имя розы. М.: Книжная палата, 1989, էջ 429:

21 Ասում են, որ պատմության մեջ առաջին խոսքային ակտն արդեն այդպես է գնահատվել. «Եվ Աստված ասաց. «Թող լույս լինի»: Եվ լույս եղավ: Աստված տեսավ, որ լույսը լավ է, և Աստված լույսը բաժանեց խավարից» (Ծննդոց 1 : 3-4):

22 Անգամ «Տեքստի գործաբանության հարցեր» վերնագիրը հպարտորեն կրող ուսումնասիրության մեջ վերլուծված բոլոր հարյուր յոթ օրինակները բարդ նախադասության գուգադրումներ են կամ պարզ նախադասությանը, կամ երկու պարզ նախադասությունների կապակցությանը, այսինքն՝ ընդամենը քերականական կառույցների տրամաբանական վերլուծություններ են, որոնց կապը գործաբանության հետ մնում է հեղինակի անքննելի ուղիների մշուշում. տե՛ս **Дейк Т. ван.** Вопросы прагматики текста // Новое в зарубежной лингвистике. Вып. VIII. М.: “Прогресс”, 1978, էջ 259-336:

ելքերը կանխատեսելի կամ ընդունելի են արդյոք հեղինակի համար: Եթե Վայնինգերի վերաբերյալ, որն ինքը հետևել է իր ընթերցողների օրինակին, կասկածներ դեռ կարող են լինել, ապա Գյոթեին, որքան էլ որ նա հետագայում հոխորտացած լինի իր վեպը «սխալ հասկացած» ընթերցողների հասցեին՝ փորձելով արդարացնել իրեն<sup>23</sup>, միտումնավորության մեջ դժվար է մեղադրել:

**Հեղինակ – ընթերցող** փոխհարաբերության ըմբռնումը արմատական հեղաշրջման է ենթարկվում: Խարխվում է հերմենևտիկայում հեղինակին շնորհված միահեծան իշխանությունը: Հեղինակը (սա բառախաղ չէ) հեղինակագրկվում է:

Նիցշեն հռչակել էր Աստծու մահը: Տեքստի «արարիչը» հեղինակն է, և իրենց Նիցշեի հետևորդներ համարողներն իրենց պարտավորված են զգում ազդարարելու հեղինակի մահը: Այս դրույթը ձևակերպողը և տարածողը հետկառուցվածքաբանության հատկապես ծայրահեղ ու արտառոց դրույթների գերազույն մունետիկն ու գլխավոր դրոշակակիրն է՝ Բարտը: Մի ծայրահեղությունը փոխարինվում է հակառակ ծայրահեղությամբ: Ֆրանսիական մեծ հեղափոխության ավանդույթները շարունակվում են. արքային գահընկեց անելը բավարար չէ, պետք է անսպառնալից գլխատել նրան: «Ընթերցողի ծնունդի համար պետք է լինում վճարել հեղինակի մահով»<sup>24</sup>, – ասում է Բարտը, և ասես հնչում է՝ արքան մահացել է, կեցցե՛ արքան: Փաստորեն ընթերցողը օժտվում է այն նույն իրավասություններով, որոնք մինչ այդ հեղինակին էին տրվում (սա նման է հեքիաթային հայտնի սյուժեի այն մեկնաբանությանը, ըստ որի՝ ջրի ակունքը զավթած հրեշին սպանող հերոսը գրավում է նրա տեղը): Ֆուկոն, «հեղինակ» իրողությունը վերլուծելով որպես գործառույթ, լիովին չի արժեզրկում հեղինակին, միայն անթույլատրելի է համարում հեղինակի և գրող սուբյեկտի նույնացումը. նա համեմատաբար զգուշավոր ձևակերպումներ է գտնում՝ նախընտրելով խոսել հեղինակի «անհետանալու» կամ «ջնջվելու» մասին<sup>25</sup>: Նրան հաջողվում է «հեղինակի մահվան» համար մեղադրանքը հեռացնել ընթերցողից. «Երկը, որի խնդիրն անմահություն բերելն էր, հիմա իրավունք է ստացել սպանելու՝ լինելու իր հեղինակին սպանողը»<sup>26</sup>: Շատ ավելի դրամատիկ հնչողություն ունի **հեղինակ – տեքստ – ընթերցող** եռանկյանը Էկոյի տված հանգուցալուծումը. «Հեղինակը ճիշտ կանի, եթե մեռնի՝ ավարտելով գիրքը: Որպեսզի չկանգնի տեքստի ճանապարհին»<sup>27</sup>: Տեքստի ճանապարհին կանգնելը տեքստը քարացնելու ձգտումն է: Թվում է, թե դա, իրոք, միայն հեղինակից սպառնացող վտանգ է: Սակայն այդպիսի փորձ կարող է անել նաև ընթերցողը: Ռիլկեն պատմում է, որ ինքը հաճախ իր «Մալթե Լաուրիդս Բրիգեի գրառումները» վերցրել է երիտասարդների ձեռքից. «Քանի որ այդ գիրքը, որի վերջնական նպատակը ասես թե կյանքի անհնարինությունն սպացուցելն է, պիտի կարդացվի, ես կասեի, **սեփական հոսանքին հա-**

23 Տե՛ս **Էբերման**, Զրույցներ Գյոթեի հետ, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1975, էջ 615-616:

24 **Բարտ Բ.** Смерть автора // **Барт Р.** Избранные работы: Семиотика. Поэтика, էջ 391:

25 Տե՛ս **Ֆուկո Մ.** Что такое автор? // **Фуко М.** Воля к истине: по ту сторону знания, власти и сексуальности. М.: «Касталь», 1996, էջ 18-38:

26 Նույն տեղում, էջ 14:

27 **Յո Մ.**, նշվ. աշխ., էջ 430:



**կատակ**»<sup>28</sup>: Գիրքը կարդալն արգելելը առերևույթ բռնություն է ընթերցողի նկատմամբ, որին Ռիլկեն գուցե գնացել է՝ Գյոթեի դաժան փորձը կրկնելուց զգուշանալով: Բայց իրականում սա ընթերցողին, ուրեմն և տեքստին ազատություն տալու բացառիկ դեպք է, երբ հեղինակը ոչ թե պարզապես թույլ է տալիս, այլ պահանջում է չկաշկանդվել իր շարադրանքով, դեմ գնալ իր գրածին:

Երբեմն անգամ ծայրահեղություններից գերծ վերլուծություններում ընկալողի նկատմամբ ուշադրությունը ստվերի մեջ է թողնում հեղինակին: Լոտմանը նկարագրում է տեքստի հարաբերությունն ընկալողի հետ. «Տեքստը և ընթերցողը ասես փոխըմբռնում են որոնում: Նրանք «հարմարվում են» իրար: Տեքստն իրեն պահում է այնպես, ինչպես զրուցակիցը՝ երկխոսության մեջ. նա վերակազմավորվում է (այն հնարավորությունների սահմաններում, որոնք նրան թողնում է ներքին կառուցվածքային անորոշության պաշարը)՝ լսարանի նմուշին համապատասխան: Իսկ հասցեատերը նրան նույն կերպ է պատասխանում. իր տեղեկատվական ձևունությունն օգտագործում է վերակառուցման համար, որը նրան մոտեցնում է տեքստի աշխարհին: Տեքստի և հասցեատիրոջ միջև այդ բևեռում առաջանում են հանդուրժողության հարաբերություններ»<sup>29</sup>: Բայց տեքստի հետ նույնպիսի խաղի մեջ մտնում է նաև հեղինակը: Դա պակաս ակնհայտ խաղ է, բայց այն կա. մի կողմից՝ տեքստը հեղինակին թույլ է տալիս որոշումներ կայացնել իր մասին, մյուս կողմից՝ իր պայմաններն է առաջադրում հեղինակին, և շատ բան հեղինակը գրում (ասում) է, քանի որ այդ է պահանջվում տեքստում, որ նույնն է՝ այդ է պահանջում տեքստը, այդ է պահանջում տեքստի ներքին տրամաբանությունը: Հեղինակն այդպես վարվում է ոչ միայն հանուն տեքստի (որ նույնպես կա, ընդ որում որքան տեքստն ավելի գեղարվեստական է, այնքան ավելի շատ են տեքստային քմահաճույքները, որոնք տվյալ տեքստում օրենքի ուժ են ստանում), այլև հանուն նրա, որ իր համար հնարավոր միակ ձանապարհով՝ տեքստի միջոցով, կապ հաստատի ընկալողի հետ: Այնպես որ տեքստային հաղորդակցման պատկերն ամբողջականությանն ավելի մոտ կլինի, եթե դիտարկվեն, և **տեքստ – ընկալող**, և **տեքստ – հեղինակ** հարաբերությունները:

«Հեղինակի մահվան» և ընթերցողի գերիշխանության հռչակումը նաև ներքուստ հակասական է այն առումով, որ ընթերցող լինելը միայն **հեղինակ – ընթերցող** հարաբերությամբ որոշվող կարգավիճակ կամ գործառույթ է: Հարաբերակից հասկացություններից մեկի վերացումը անիմաստ կամ անհասկանալի է դարձնում մյուսը: Անընթերցող հեղինակի պատկերը տխուր պատկեր է: Անհեղինակ ընթերցողի պատկերը մղձավանջային է: Կարելի է ասել, որ Բարտի «Հեղինակի մահը» հողվածի սպառիչ պատասխանը բոլոր հեղինակների անունից նախապես՝ այդ հողվածի լույս տեսնելուց յոթանասուն տարի առաջ, տվել է Մարկ Տվենը իր հանրահայտ հեռագրում՝ իր մահվան մասին լուրը չափազանցություն որակելով: Եվս մեկ ուշագրավ հանգամանք. հեղինակի անունն ու ստորագրությունը տեքստի համար անկարևոր համարողներից ոչ մեկը չի մոռանում իր գրածի վրա

28 **Рильке Р.** Ворпсведе. Огюст Роден. Письма. Стихи. М.: “Искусство”, 1971, էջ 195:

29 **Лотман Ю.** Внутри мыслящих миров // **Лотман Ю.** Семиосфера. СПб., “Искусство”, 2004, էջ 219–220:

դնել իր անունը:

Լավագույն տարբերակը շարժուն փոխաստեղծումն է, երբ ընթերցողը կարող է հեղինակի տեղում հայտնվել, դառնալ հեղինակակից, իսկ հեղինակը, ասես մոռանալով, որ այդ տեքստն ինքն է գրել, կարող է իրեն ընթերցող զգալ, դառնալ «ընթերցողակից»: Այդ համագործակցության մեջ ընթերցողների՝ հեղինակային իրավունքից օգտվելու փորձերի արձագանքները, իհարկե, տարբեր են, մանավանդ երբ ընթերցողը փորձում է միջամտել պատումային տեքստին: Տոլստոյը կտրականապես հրաժարվում է իր վեպի լուծումը փոխելուց՝ գնացքի տակ նետվելու վճռի ամբողջ պատասխանատվությունը զցելով հերոսուհու վրա: Բայց կա և հակառակ դեպքը: Դոյլը տալիս է ինտերակտիվ գրականության երևի առաջին նմուշը, երբ ընթերցողների խնդրանքով հարություն է տալիս Շերլոկ Հոլմսին, որին ինքը սպանել էր Մորիարտիի ձեռքով:

Տեքստի վերաբերյալ որոշումների «վերստուգիչ փաթեթի» համար պարանի ձգումն անպտուղ զբաղմունք է, քանի որ փաթեթը փոխանցիկ է (դեռ չհաշված, որ հաջողության հասածները երբեմն գետնին են տապալվում): Տեքստի ստեղծման փուլում այն հեղինակի մոտ է, բայց լավ կլինի, որ նա այդ մասին անընդհատ չհիշի: Հետո այն հայտնվում է ընթերցողի մոտ, բայց ամենևին կարիք չկա, որ նա տեղյակ լինի դրան: Մենիշլասնությունը բռնագավթելու ամեն մի փորձ վտանգավոր է, կարող է անգամ մահացու լինել: Վտանգավոր է ոչ թե հեղինակի կամ ընթերցողի, այլ առաջին հերթին տեքստի համար, քանի որ դա նման կլինի տեքստին զսպաշապիկ հագցնելուն, իսկ տեքստը դրան կարող է և չդիմանալ:

**Ընթերցողը հանդիպում է Տեքստին, և Սֆինքսը հանելուկ է առաջարկում Էդիպոսին.**

Ինչ եմ ես, ինչի՞ համար եմ ես:

Դու ինձ համար ես, և դու այն ես, ինչ ես կտանեն ինձ հետ, – պատասխանում է Ընթերցողը:

Այս ասելով՝ նա անարգել հեռանում է՝ թիկունքում լսելով Սֆինքսի ոտնաձայնը: Բայց բավական է, որ նա շրջվի համոզվելու համար, որ Տեքստը հենց այն է, ինչ ինքը պատկերացրել է, որ Էդիպոսը կերպափոխվի կասկածամիտ Օրփեոսի, որը միայն մի հեռացող ստվեր է տեսնում...

**Աշոտ Ս. Աբրահամյան** – մասնագիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է լեզվափիլիսոփայության, նշանագիտության, ընդհանուր լեզվաբանության, լեզուների տիպաբանության ոլորտները: Զբաղվում է լեզվի հատկապես նշանագիտական վերլուծության խնդիրներով:

**HORIZONS OF TEXTUAL SPACE**

Ashot S. Abrahamyan

**Key words** – text, space, structure, sequence, sender (author), recipient (reader), hermeneutics, post-structuralism.

Spatiality often lays foundation for text characteristics. It is fostered by text structuality (regardless of its interpretation), as well as by the fact that reasonings on text are, in the first place, based on written text, which, due to its materiality (a page, a book), occupies part of the space. Textual space is managed by the sender (author) and the recipient (reader). There exists a great variety of recipient perceptions of the original text to which evaluation criteria, accepted in pragmatics for a single utterance, are not applicable. In classical hermeneutics all the meaning-making rights in the text are granted to the author: the role of the reader is reduced to the revelation of the author's idea. Post-structuralism, on the contrary, enunciates the “death of the author” and entrusts absolute textual space organization freedom to the reader. Optimal is the cooperation model, in which the reader, to some extent, becomes a co-author, and the author becomes a co-reader.

Резюме

**ГОРИЗОНТЫ ТЕКСТОВОГО ПРОСТРАНСТВА**

Ашот С. Абраамян

**Ключевые слова** – текст, пространство, структура, последовательность, сообщающий (автор), воспринимающий (читатель), герменевтика, постструктурализм.

Пространственность часто ставится в основу характеристики текста. Этому способствуют как структурность текста, как бы она не истолковывалась, так и то обстоятельство, что в рассуждениях о тексте имеется в виду в первую очередь письменный текст, который вследствие своей материальности (страница, книга) занимает определенную часть пространства. Пространство текста подвластно отправителю (автору) и получателю (читателю). Очевидно существование множества различных читательских восприятий оригинального авторского текста, к которым неприменимы критерии оценки, выработанные в прагматике для отдельных высказываний. Классическая герменевтика отдает все права на смыслообразование в тексте автору: роль читателя сводится к выявлению авторского замысла. Постструктурализм, напротив, провозглашает “смерть автора” и предоставляет абсолютную свободу в организации текстового пространства читателю. Оптимальным представляется вариант сотрудничества, когда читатель становится в некотором роде соавтором, а автор – “сочитателем”.